

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ Վ.ԴՎԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

11.07.2011թ.-ին Վ.Դվինի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր Ս.Աբրահամյանը,

քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Մ.Տամրազովան:

Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժ.ամբուլատորիայի, դպրոցի մանկավարժներ, համայնքի բնակիչներ:

Լսեցին՝ Արարատի մարզի Վ.Դվին համայնքի ղեկավար Լ. Պետրովայի հաշվետվությունը՝ 2011թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ

2011թ. առաջին կիսամյակի ընթացքում Վ.Դվինի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապատարանը բնակիչներից ստացել է 183 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տվել է 268 տեղեկանք, ստացել 27 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2011թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազրման, սահմանների ճշգրտման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

- 2011թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ – 1675.4 հազար դրամ

բ) գույքահարկ – 297.9 հազար դրամ

գ) տեղական տուրք – 40.0 հազար դրամ

դ) ոչ հարկային եկամուտ – 147.0 հազար դրամ

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

ա) համայնքում նշվել է մարտի 8-ը՝ կանանց միջազգային տոնը, ապրիլի 1-ին աստրիների նոր – տարին, մայիսի 9-ը՝ հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը, հունիսի 14-ին նշվել է աստրական «ՄԱՐԵՁ» եկեղեցական տոնը:

բ) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 565.0 հազար դրամի ֆինանսական աջակցություն

գ/աջակցություն է ցուցաբերվել հանգուցյալների ընտանիքներին – 315.0 հ.դր.

դ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հանկարծակի է 255.0

հազար դրամ:

Created with



nitro PDF

professional

download the free trial online at nitropdf.com/professional

- Համայնքում իրականացվել է փողոցների անվանակոչման և շինությունների ցուցատախտակների ամրացման ծառայություն, որի համար փոխանցվել է 300.0 հազար դրամ:

- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման, հանգստի գոտու բարեկարգման: Այդ նպատակով ձեռնարկվում են միջոցառումներ:

